պըստամբեալքս եւ յորմէ՞ ճառի։ Ծանեար նախ ի գիրս, որ Հասան Ապազայ գործակալ Իփշիրին յորժամ եկ և գնաց յԱրևելս, ետուն նմա զԱմիթ ի փաշայութիւն. և վէզիրս ետ նմա զԲերիայ, որ և ի Դամասկոս նստէր որդին Թայարի։ Եւ յորժամ եկ եւ գնաց յիտրէնէ, առաքեաց նոցա պատգամ հրամանաւ արքայի թէ Եւ դուք եկեսջիք զի երթիցուք ի պատերազմ։ Եւ նոքա եկեալ տեսանել զպատրաստութիւն ճանապարհի, կրկին առաքէ թէ Զկայ պատերազմ, նստէ՛ք ի տեղիս ձեր. և ապայ առաքէ թէ Եկէ՛ք, փորձելով առնէր զայս, թէև ի նենգութենէն։ Ծանեան նոքա, և մինչդեռ էին ի ճանապարհ երկոքինս՝ ասեն ցմիմեանս. Ո՞ւր երթամք յուռական աղուխուն, ո՞ւր երթամք ի կեր գազանին, ո՞չ ապաքէն ամենայն աշխարհ լայ ի ձեռաց նորին. և յազգս մեր մայր չմնաց ցամաք աչօք թէ չելաց. նաև զսիրելիս արքայի որպէս գիտէր արար, օրինակ մեզ՝ Ֆազլին և այլն ամենայն. առ իւր ի գնալս մեր ողջ ոչ թողու, ո՞ւր երթամք՝ ասելով միաբանէին միակամ, և համախոհիւք փոքր փոքր գայլն առ ի վայր և ժողովէին առ իւրեանս բազում եւ անթիւս, որք իւրեանցն էին եւ որք էին փախուցեալք ի վէզիրէս։ Նա՛ և ապստամբք բազումք անթիւ զօրովք հեծելովք գայլն նստէին ի դաշտն որ կոչի Ոսկի՝ ոչինչ ունելով զերկիւղ։ Եւ յետ այլ պատգամաց, ասէր ապա և առ թագաւորն. Տացես զվէզիրն քո եւ ոչինչ եւս մեր կամք, եւ քեզ ծառայեմք մինչև ցմահ և զոր հրամայես՝ կատարեմք ի սպառ։ Եւ թագաւորն պատասխանէր, որ նստեալ էր յիտրէնէ, Գնացէ՛ք նստէք ի մանսուպս ձեր զոր տվեալ եմ ձեզ և խափանեցէք[1]) զխորհուրդդ, զի չէ ժամանակ տալոյ զսայ, չէ ատեն փոխելոյ, քանզի ի մէջ

1) խարանեցէք։